527

Երևանի քաղաքապետ պարոն

Տիգրան Ավինյանին

Կորյուն Մարտունի Թադևոսյանից

Հանրային հավաքի մասին իրազեկում

Հարգելի պարոն Ավինյան

Հիմք ընդունելով Հավաքների ազատության օրենքի 12-14 հոդվածների պահանջները <<Սկսենք զրույից>> տաքսի վարորդների նախաձեռնության անդամների կողմից իրազեկում եմ, որ 2025 թվականի մարտի 22-ին ժամը 15:00-ից անցկացնելու ենք հանրային հավաք Հրազդանի կիրճում՝ Հրազդան մարզադաշտի հարակից տարածքում՝ <<Դար 21>> հեռուստաընկերության հարևանությամբ, որի նպատակն է իրազեկել տաքսի վարորդներին և գործունեություն իրականացնող անձանց՝ նշված բնագավառում առկա խնդիրների մասին:

Հավաքին մասնակցելու են 30-40 մասնակից վարորդ և տրանսպորտային միջոց, սակայն հաշվի առնելով նախկինում համանման հավաքների ժամանակ մասնակիցների հետաքրքրվածությունն ու թվաքանակը, չի բացառվում, որ հավաքին մասնակցեն 100-ից ավելի մարդիկ:

Հավաքի ժամանակ օգտագործվելու են տրանսպորտային միջոցներ, մեր նախաձեռնության լոգոտիպով պաստառներ, շարժական բարձրախոս:

Կարգադրիչների թիվը՝ 2:

Հավաքի շրջանակներում նախատեսում ենք ժամը 16:00-17:00 ժամանակահատվածում իրականացնել իրազեկման ավտոերթ 30-ից առավելագույնը 40 տրանսպորտային միջոցներով՝ անկախ մասնակիցների թվաքանակից: Ավտոերթի երթուղին նախատեսել ենք հետևյալը՝ Հրազդան մարզադաշտ-Աթենքի փողոց-Բրազիլիայի հրապարակ-Աթենքի փողոցով հետադարձ-Հաղթանակ կամուրջ-Մաշտոցի պողոտա-Սայաթ-Նովա պողոտա-Խանջյան փողոց-Ագաթանգեղոս փողոց-Արշակունյաց պողոտա-Երևան մոլի հարակից բացօթյա ավտոկայանատեղի:

Արդեն երթուղու վերջնակետում հավաքվելով նախատեսում ենք մինչև ժամը 18:00-ն ամփոփել և ավարտել հավաքը:

Հայտնելով վերոգրյալը և իրազեկելով հանրային հավաքի մասին խնդրում եմ այն ընդունել ի գիտություն և դրա անցկացման բնականոն ընթացքն ապահովելու նպատակով ներգրավել համապատասխան մարմիններին:

Տեղեկացնում եմ նաև, որ ավտոերթի ընթացքում մասնակից վարորդների կողմից պահպանվելու են ճանապարհային երթևեկության կանոնները (այսինքն՝ մեքենաները երթևեկելու են հնարավորինս իրար հետևից, առանց միմյանց վազանց կատարելու, հնարավորինս աջ եզրային գոտիով, լուսացույցի և ճանապարհային նշանների կանոնների պահպանմամբ):

Կից ներկայացնում եմ անձնագրիս պատճեն:

Դիմող՝ Կորյուն Թադևոսյան

14.03.2025թ.